ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2019թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ *ԿՐԹՈՒԹՅՈՒՆ*

Մարզում գործում է 48 հանրակրթական ուսումնական հաստատություն:

2 առանձնացված ավագ դպրոց Եղեգնաձոր, Վայք քաղաքներում և 1 կրթահամալիր Ջերմուկ քաղաքում գործում են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ: Այդ դպրոցներում սովորում է 736 աշակերտ:

45 դպրոց գործում են մարզային ենթակայությամբ, որոնցից 31-ը միջնակարգ են, 14-ը՝ հիմնական:

Մարզային ենթակայությամբ գործող 45 դպրոցներում սովորում է 5768 աշակերտ, աշխատում են 883 ուսուցիչներ, իսկ ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողների թիվը 399 է: ՈՒսուցիչների շուրջ 90%-ը (795 ուսուցիչ) ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

45 դպրոցներից 12-ը գտնվում են լեռնային բնակավայրերում, 6-ը՝ բարձր լեռնային, 5-ը՝ սահմանամերձ:

45 դպրոցներից 13-ում սովորում են մինչև 30 աշակերտներ:

ՈՒսուցիչ / աշակերտ հարաբերակցությունը 1:6,5 է:

Դասարանի միջին խտությունը կազմում է 13 աշակերտ:

48 դպրոցներից 17-ը ջեռուցվում է գազի լոկալ կաթսայատան միջոցով, 1-ը (Խաչիկի միջն.) կոշտ վառելիքով աշխատող լոկալ կաթսայատան միջոցով, մնացած 30 դպրոցները էլեկտրական ջեռուցիչներով:

Դպրոցներում գործում են 17 նախակրթարաններ, որոնցում ընդգրկված է 178 երեխա:

Համայնքային ենթակայությամբ գործում են 17 մանկապարտեզներ, որոնցում ընդգրկված է 1246 երեխա:

Մարզի բոլոր դպրոցներում գործում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Սնունդ են ստանում 1-4 դասարանների 2338 աշակերտներ:

Մարզային ենթակայությամբ գործող 9 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն, որում ընդգրկված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 130 աշակերտ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները:

1. Դպրոցներից հավաքագրվել և կազմվել է մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական համակազմի ցանցային տվյալները 2019թ. հունվարի 1-ի և 2019թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ: Դրանք մարզպետի կողմից հաստատվելուց հետո ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Մարզում աշակերտների թիվը կազմել է 6504 ներառյալ ավագ դպրոցները:
2. Ստուգվել և մարզպետի հաստատմանն է ներկայացվել հանրակրթական դպրոցների 2018-2019 ուստարվա 2-րդ և 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակների տարիֆիկացիոն ցուցակները:
3. Կազմակերպվել, անցկացվել և ամփոփվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին մասնակցել են 9-12 –րդ դասարանների 512 աշակերտներ, որոնցից 48-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրապետական փուլին.
4. Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդների լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ կազմակերպվել է նոր կառավարման խորհուրդների ձևավորման աշխատանքները:
5. Հայոց լեզվի կենտրոնացված քննությունը անցկացնելու համար նախապատրաստվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ուղարկվել քննական կենտրոնների տեղաբաշխման հետ կապված առաջարկություններ, ինչպես նաև 9-րդ դասարանի շրջանավարտների անվանացանկը: Այդ նպատակով համագործակցված աշխատանքներ են իրականացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնի հետ:
6. Կրթության, մշակույթի և սպորտի վարչության անմիջական վերահսկողությամբ ապահովվել է դպրոցներից պահանջվող տվյալների մուտքագրումը ԿՏԱԿ-ի (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն) կողմից ստեղծված կառավարման էլեկտրոնային համակարգ:
7. Շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերի լրացման համար կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել 12-րդ դասարանի շրջանավարտների ճշտված անվանացանկը և 9-րդ դասարանի շրջանավարտների ճշգրտված թիվը: 2018-2019 ուսումնական տարում 9-րդ դասարանն ավարտել են 568, իսկ 12-րդ դասարանը՝ 416 շրջանավարտներ.
8. Կազմակերպվել է պետական ավարտական և միասնական քննությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները: Միասնական

քննություններին մասնակցել են 218 դիմորդներ, որոնցից 184-ը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ (շուրջ 84%-ը):

9. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և ընթացք է տրվել վարչությանը հասցեագրված դիմումներին:
10. Մարզի դպրոցներում բարձր հիմքերի վրա է դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության հարցը: Դպրոցականների միջև ամեն տարի հաջողությամբ անցկացվում է նախազորակոչային տարիքի երիտասարդների մարզական մրցույթները 6 սպորտաձևից: Ինչպես նաև <<Դիպուկ հրաձիգ>> հանրապետական մրցույթը: Այդ մրցույթում մազային փուլու հաղթած հրաձիգը հանրապետական փուլում գրավել է 2-րդ տեղը:
11. Դպրոցներից հավաքագրվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել հերթական ատեստավորման համար վերապատրաստվող ուսուցիչների ցուցակները:
12. ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացվել և դպրոցներին է բաշխվել 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերը (վկայականներ և ատեստատներ):
13. ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել կորած ավարտական փաստաթղթերի (ատեստատներ, վկայականներ) կրկնօրինակների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք ստացել և հանձնվել են դպրոցներին լրացնելու և կորցնողին տրամադրելու համար:
14. Որպես դիտորդ վարչության մասնագետները մասնակցել են դպրոցներում անցկացվող ուսուցչի և դպրոցի գործադիր տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթներին:
15. Համագործակցելով բնակչության հաշվառման պետական ռեգիստրի, ՔԿԱԳ բաժինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ անցկացվել է դպրոցահասակ երեխաների հաշվառումը և ապահովվել է նրանց ընդգրկումը հանրակրթության մեջ:
16. Ամռան ընթացքում 3 հերթափոխով 20-ական օրով կազմակերպվել է մարզի զոհված զինծառայողների, ծնողազուրկ և սակավ ապահովված ընտանիքների 7-13 տարեկան 190 երեխաների ամառային հանգիստը Հանքավանի ,,Հասմիկ,, ճամբարում:
17. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և անցկացվել է ընթերցանության, ասմունքի և այլ հանրապետական մրցույթների մարզային փուլերը:

18. Հրատարակչություններից ժամանակին ստացվել և դպրոցներին է բաշխվել դպրոցական դասագրքերը: Բոլոր աշակերտներն ապահովվել են դասագրքերով: Առանց ուշացման կազմակերպվել է վարձույթով տրվող դասագրքերի վարձակալության գումարների հավաքագրումը և մուտքագրումը դպրոցների այդ նպատակով գործող բանկային հաշիվներին: Գումարները հավաքագրվել են 100%-ով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մարզում գործում են՝

Երկու թանգարաններ՝ ,,Գլաձորի պատմամշակութային արգելոց թանգարան,, ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան մարզային ենթակայությամբ: Գերատեսչական ենթակայությամբ երկու պատկերասրահ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում: Մեկ երաժշտական դպրոց մարզային ենթակայությամբ, և չորս արվեստի դպրոցներ համայնքային ենթակայությամբ՝ Վայք, Ջերմուկ, Արենի համայնք գ. Աղավնաձոր:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում սովորողների թիվը 745 է, իսկ դասավանդողների թիվը 92: Երկու ՄՍԿ (մանկական ստեղծագործական կենտրոն) Վայք և Եղեգնաձոր քաղաքներում: Մեկ գեղարվեստի դպրոց (65 աշակերտ 5 մանկավարժ) Եղեգնաձոր քաղաքում:

14 բնակավայրերում գործում են 20 պարային համույթներ:

36 գրադարան համայնքային ենթակայությամբ, միայն մեկը Եղեգնաձոր քաղաքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ :

31 մշակույթի տուն, որից մեկը մազային ենթակայությամբ ,,Եղեգնաձոր քաղաքում, իսկ մնացածները համայնքային ենթակայությամբ: Ներկա դրությամբ մշակութային միջոցառումներ կարելի է կազմակերպել և անցկացնել վերը նշված մշակույթի տներից 14-ում, մնացածները խիստ վերանորոգման կարիք ունեն:

Անցկացվել են հետևյալ միջոցառումները

Բանակի օր, Կանանց միջազգային օր, Արվեստի դպրոցներում կիրառական արվեստի փառատոն, Մայրության և գեղեցկության տոն, Ապրիլի 24-ին հիշատակի միջոցառում:

1. Հաղթանակի և խաղաղության ու հանրապետության տոներին նվիրված միջոցառումների շարք՝

ա) Պսակադրություն զոհված ազատամարտիկների և Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշահամալիրներում:

բ) Միջոցառում նվիրված Արցախի հերոս Վազգեն Սարգսյանի ծննդյան 60 ամյակին:

գ) Հայրենասիրական երգերի և պարարվեստի փառատոն:

դ) Տոնական համերգ և հրավառություն:

2. Անկախության տոնին նվիրված միջոցառումներ:

ա) ՀՀ Անկախության տոնին նվիրված միջոցառում /գալլա համերգ և հրավառություն/

բ) Կոմիտասյան օրեր՝

գ) Շարադրությունների մրցույթ ,,Ես սիրում եմ իմ հայրենիքը,, թեմայով

3. Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության ,,Քույր դպրոցներ,, ծրագրի շրջանակներում Բ. Կանաչյանի անվան արվեստի դպրոցում կազմակերպվեց հանդիպում Եղեգնաձորի երաժշտական դպրոցի կոլեկտիվի աշակերտների հետ: Հանդիպումից հետո երկու դպրոցների աշակերտների մասնակցությամբ կազմակերպվեց համերգ:

4. Մարզի տարբեր համայնքներից շուրջ 100 երիտասարդներ հուլիսի 5-ին մասնակցեցին ,,Մենք,, պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամի կողմից կազմակերպված ՀՀ պետական խորհրդանշանների օրերին նվիրված տոնական միջոցառմանը:

5. Հոկտեմբերի 7-ին մարզի մի շարք գրադարաններում կազմակերպվեց ,,Գրադարանավարի օրվան,, նվիրված ,,Թումանյան, Կոմիտաս-150,, խորագրով միջոցառումներ:

6. Եվրոպական ժառանգության օրերի ,,Արվեստ և ժամանց,, խորագրով ծրագրի շրջանակներում, Եղեգնաձորի Երկրագիտական թանգարանում կազմակերպվեց՝

ա) Սեպտեմբերի 28-ին--,,Արվեստ և ժամանց,, վարպետաց դաս, կավագործ Զաքար Մկրտչյանի մասնակցությամբ:

բ) Սեպտեմբերի 29-ին-- Բատիկայի ուսուցում փորցառու մասնագետների մասնակցությամբ:

գ) Սեպտեմբերի 28-29 ին—Թանգարանային ցուցադրություններ, ծանոթություն Վայոց ձորի պատմությանն ու մշակույթին:

7. 2019թվականին ,,Աջակցություն մշակութային միջոցառումներին,, ծրագրով մարզին հատկացվել է 5.353.600դրամ,13 միջոցառումների համար: Ներկա դրությամբ անցկացվել է հինգ միջոցառում:

Ծախսվել է 2.100.900 դր

Մնացել է՝ 3.252.700դրամ

8. Բեմադրվել է ,,Ատամնաբույժն արևելյան,, պիեսը Եղեկնաձորի մշակույթի տանը: Նորաստեղծ թատերախումբը հանդես է եկել մարզում և Արցախում:

9. Տարվել են աշխատանքներ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ: ՀՀ Վայոց ձորի մարզպետի համաձայնեցմանն է ներկայացվել Գնդեվազ, Եղեգիս, Հորբատեղ, Եղեգնաձոր, Գլաձոր և Հորս բնակավայրերում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտիների նախագծերը:

ՍՊՈՐՏ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում է 4 մարզական կառույց՝

1. Եղեգնաձորի մարզադպրոց - 6 խումբ (2 խումբ ֆուտբոլ, 2 խումբ վոլեյբոլ, 2 խումբ ըմբշամարտ), 3 մարզիչ, 135 երեխա:
2. Վայքի մարզադպրոց - 7 խումբ (2 խումբ վոլեյբոլ, 2 խումբ կարատե, 3 խումբ ֆուտբոլ), 4 մարզիչ, 70 երեխա:
3. Մալիշկայի մարզադպրոց - 4 խումբ ըմբշամարտ, 2 մարզիչ, 74 երեխա:
4. Ջերմուկի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն ՀՈԱԿ - 4 խումբ (1 խումբ բռնցքամարտ, 1 խումբ քիք բոքսինգ, 2 խումբ ֆուտբոլ, 1 խումբ շախմատ), 4 մարզիչ, 93 երեխա:

Կազմակերպել և անցկացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

1. ՀՀ պետական մարմինների աշխատակիցների միջև անցկացվող հրաձգության հանրապետական մրցույթ (փետրվարի 21-22): Մարզպետարանի հրաձգության թիմը գրավեց 9-րդ տեղը:

2. Շախմատի հուշամրցաշարեր նվիրված զոհված ազատամարտիկների հիշատակին, անվանի մարզիկների հիշատակին :

3. Կարատեի հուշամրցաշար նվիրված զոհված ազատամարտիկ՝ Վարդան Վարդանյանի հիշատակին:

4. Ֆուտբոլի մրցաշար նվիրված առաջին հանրապետության 101 ամյակին:

5.Վոլեյբոլի հուշամրցաշար նվիրված Է.Դանուղյանի հիշատակին:

6. Բասկետբոլի հուշամրցաշար նվիրված Վ.Ղազարյանի հիշատակին:

7. Ֆոտբոլի հուշամրցաշար նվիրված անվանի մարզիկ Լ. Հովհաննիսյանի ծննդյան 67-ամյակին: Մրցաշարն ամենամյա է և մրցույթին մասնակցում են նաև հարևան մարզերի թիմեր: Այդ բոլոր մրցաշարերի արդյունքում ստեղծվել են աղջիկների և պատանիների 2007—2008թթ հավաքական թիմեր, որոնք մասնակցում են ՀՖՖ-ի կողմից կազմակերպվող տարբեր առաջնությունների:

8. 2019թ. ՀՖՖ-ի նախաձեռնությամբ և համայնքների աջակցությամբ մարզի 10 համայնքներում նախատեսվել է կառուցել տաս փոքր (20x40) ֆուտբոլային խաղադաշտեր: Խաղադաշտերի կեսից ավելին արդեն հանձնվել են շահագործման, մնացածները կավարտվեն մինչև տարեվերջ:

9. Բացի մարզային մրցույթներից տարվա ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ մարզում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց հաղթողները մասնակցել են հանրապետական փուլերին:

ա) Սպորտլանդիա ՀՀ և Արցախի հանրապետության դպրոցականների 1-3 և 4-7-րդ դասարանցիների միջև: Անցկացվել է տարածաշրջանային և մարզային փուլերը, որի արդյունքում Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի 1-3-րդ դասարանցիների հավաքական թիմը հանրապետական փուլում, Գյումրիում, գրավել է 3-րդ տեղը և արժանացել բրոնզե մեդալների և ստացել սպորտային գույք, իսկ 4-7-րդ դասարանցիների մրցույթում Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի թիմը Վանաձորում գրավել է 5-րդ տեղը:

բ) Ապրիլ-մայիս ամիսներին անցկացվել է ,,Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն,, հանրապետական մրցույթի տարածաշրջանային և մարզային փուլերը, որտեղ հաղթող է ճանաչվել Եղեգնաձորի թիվ 1 նախադպրոցական հաստատությունը և եզրափակչում գրավել է 4-րդ տեղը: Տարածաշրջանային և մարզային փուլերում 1-3-րդ տեղեր գրված նախադպրոցական հաստատությունները ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից պարգևատրվել են գավաթներով, դիպլոմներով և մարզական գույքով:

գ) Անցկացվել է ,,Լավագույն մարզական ընտանիք,, մրցույթի մարզային փուլը և մարզի հավաքականը մասնակցել է Ծաղկաձորում հանրապետական փուլին:

դ) Անցկացվել է Գյուղական մարզիկների հանրապետական խաղերի մարզային փուլը և մարզի հավաքականը մասնակցել է Վանաձորում հանրապետական փուլին:

ե) Անցկացվել է ,,Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ,,մրցույթի մարզային փուլը և մարզի հավաքականը մասնակցել է Ծաղկաձորում հանրապետական փուլին:

զ) Անցկացվել է ,,Տարեցների հանրապետական խաղեր,, մրցույթի մարզային փուլը և մարզի հավաքաքկանը մասնակցել է Ծաղկաձորում հանրապետական փուլին:

է) Մարզի հավաքականները մասնակցել են ՀՀ դպրոցականների և Արցախի հանրապետության 8-12 րդ դասարանցիների սպարտակիադայի միջմարզային և հանրապետական փուլերին (ֆուտզալ, վոլեյբոլ, բասկետբոլ, հնգամարտ, շախմատ, սեղանի թենիս):

10. Կազմակերպվել է ՀՀ դպրոցականների 28-րդ մարզական խաղերի վոլեյբոլի, բասկետբոլի, ֆուտբոլի մրցաշարեր: Անցկացվել է նաև 1-6-րդ դասարանցիների Ազգային ժողովի գավաթի խաղարկությունը և 7-9-րդ դասարանցիների 4-րդ ուսումնամարզական խաղերը:

11.Սեպտեմբերի 23-ին Ջերմուկում, 25-ին Վայքում և 26-ին Եղեգնաձորում անցկացվել է մարզական փառատոն, որին մասնակցել են շուրջ 400 երիտասարդներ և դպրոցականներ:

12.Հոկտեմբերին անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերի տարածաշրջանային , մարզային փուլերը: Եզրափակիչ փուլին մեր մարզից մասնակցել է Արենիի հավաքական թիմը և գրավել 6-րդ տեղը:

13.Մարզային երիտասարդական կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ:

Ապրիլի 23-ին և24-ին կազմակերպվել է երթ և մասսայական միջոցառում: Կազմակերպվել է երիտասարդության մասնակցությունը ,,Կանաչ կիրակի,, միջոցառմանը, ,,ՈՒխտագնացություն դեպի Սպիտակավոր և Թանահատի հուշահամալիրներ,,: Կազմակերպվել է ծառատունկ, սանիտարական մաքրման աշխատանքներ մարզի պատմամշակութային հուշահամալիրներում:

14. Կազմակերպվել և ապահովվել է մարզի ութ համայնքներից շուրջ 90 մարզիկների մասնակցությունը Համահայկական 7-րդ խաղերին: Բազկամարտի մրցույթում Եղեգնաձորցի Քրիստինե Հովհաննիսյանը աջ և ձախ ձեռքերի մրցույթում գրավել է համապատասխանաբար երկրորդ և երրորդ տեղերը, արժանացել արծաթե բրոնզե մեդալների:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության,

մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Ա. Ղազարյան